

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 բուրլի, կես տարվանը 6 բուրլ.  
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Թիֆլիս. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են  
իրաւաւոր ընդ 2 կոպեկ.

## ОТКРЫТА ПОДПИСКА НА 1892 ГОДЪ НА ГАЗЕТУ

# „НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

(девятый годъ изданія)

Въ 1892 г. «Новое Обозрѣніе» будетъ выходить въ Тифлисѣ, какъ и въ прошлые годы, ежедневно, по программѣ газеты литературной, общественной и политической.

Условія подписки: съ пересылкою и доставкой: на годъ 10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяць—1 р. 50 к. За границу: на годъ—17 р., на полгода—9 р., на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе какъ считая съ перваго числа любого мѣсяца).

Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, допускается разсрочка, на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р.

Подписка и объявленія принимаются: Въ Тифлисѣ: въ конторѣ газеты, Головинскій проспектъ, домъ Читахова, № 12.

Въ отдѣленіяхъ и у агентствъ подписка и объявленія принимаются по редакціоннымъ цѣнамъ безъ всякой надбавки. Иногородные адресуютъ свои требованія: Въ Тифлисѣ, въ редакцію «Новаго Обозрѣнія».

Листа, подписавшіяся (безъ разсрочки) на годовое изданіе «Новаго Обозрѣнія» 1892 г. въ настоящее время, будутъ безплатно получать газету въ текущемъ году со дня подписки.

1—2

### ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Մեր անընդունակութիւնը թուրքերի վրա քաղաքակրթական ներգործելու.—Ներքին Տեսութիւն. Նամակ վաղարշապատի. Նամակ Եւրոպայի. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խորեն Աշգեան պատրիարքի կոնդակը. Նամակ Խաթայի.—Հեռագրեր.—ԲՈՐՄԱ.—ՏԵՂԵՍԱՅԻՆ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. «Իշխանութիւն».

### ՄԵՐ ԱՆԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐԿԵՐԻ ՎՐԱ ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Մեր երկրի հայերի հարեանները, մեզ հետ միասին ապրող ժողովուրդը՝ թուրքեր են: Սակայն դարերի ընթացքում, մենք հայերս, չիմացանք քաղաքակրթական ներքին զարգացումը: Ոչ թէ միայն այն ժամանակ, երբ մենք գտնվում էինք թուրք-բաց կամ պարսից տիրապետութեան տակ,

բայց և վերջին հարիւր տարվայ ընթացքում, երբ ուսաց տիրապետութեան տակ, մենք ինքներս սկսեցինք ընդունել ուսուցողական քաղաքակրթական սկզբունքները, մենք դարձանք չիմացողներ, չիմացանք մեր ընդունած քաղաքակրթութիւնը փոքր ի շատէ մոցնել և մեր հարեան մահմեդական տարրի մէջ,

Ապացուցված ակտիւ մ է, ապացուցված ճշմարտութիւն է, որ մարդը պէտք է միշտ աշխատէ իր շրջապատողները երջանակութեան, նրանց դրութեան բարւոյն համար, որպէս զի ինքն երջանիկ լինի, որպէս զի իր դրութիւնն էլ աւելի բարւոյ լինի: Որքան իմ հարեանը կիրթ, լուսաւորված, երջանիկ կը լինի, որքան նրա վիճակը բարւոյ կը լինի.—այդքան էլ իմ դրութիւնը կը բարւոյն: Երեւակայեցէ որ իմ հարեանը հակառակական կերպով է ապրում.—և ահա նա կարող է վարակել և ինձ ու իմ ընտանիքը որ և է տարափոխիկ հիւանդութեամբ. երեւակայեցէ որ

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### “ԻՇԽԱՆՈՒՀԻ” ԴՐԱՄԱ ՀՈՐԱ ԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ, ԵՂԵՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՎԱՆԳԱԳԷՐ

Այժմ նայենք որչափ ճիշդ կերպով է նկարագրված իշխան Միքայիլ Բեկմուրեանի տիպը, որի չորս կողմը պատկուծ է Երվանդագէի ամբողջ պիեսան:

Եթէ ընդունենք, որ տիպը ուրիշ բան չէ, եթէ ոչ ժամանակակից հասարակութեան մէջ տարածված բաղժախ միանման անձնաւորութիւնների միջին երեւոյթ, այն ժամանակ իշխան Միքայիլը տիպ չէ, այլ մի բացառութիւն, այն էլ մի հրեշտակ բացառութիւն: Յայտնի է, որ ամբողջ աշխարհում իշխան Միքայիլը պէս դէպի կեանքի զուարճութիւնները և անվերջանալի օրգիան եւ ընդ նայալ ծարաւ ունեցող անձինք աւելի են պատահում փողաւոր բուրժուադրոյի մէջ, քան բարձր դասակարգի մէջ: Մեզ մօտ էլ, ինչպէս ամեն անգ, Թիֆլիս գրեթէ բոլորի ոտով եկած և ապա հարստացած մարդու որդին, կամ միանգամայն աշուղ կապալով անպիտան կարողութիւն գամից աշուղ կապալով անպիտան կարողութիւն անգլուսկ և չնչսպասող կերպով օրգիանների մէջ մինչև կոկորդը խորատուղիւ, քան մեր սակաւթիւն հին տոհմերի անգոյն, քնաթիւթաւ, բաւարի, եռանդից զուրկ, ալլաւեւում ներկայացուցիչները: Մենք գուցէ Երվանդագէից անհամար

մատ աւելի լաւ ենք ճանաչում մեր սակաւթիւն հայ արխուսկրատ տոհմերին, գիտենք, որ նրանց ներկայացուցիչները շատ խոշոր պակասութիւններ ունեն, բայց նրանց պակասութիւնները կատարելապէս հախառակ են Միքայիլին հեղինակի ձեռքով յատկացրած պակասութիւններին: Ով է մեզանում, տարիների ընթացքում, վատնել ահաղիկ կարողութիւնները՝ գերաստաններին, սիրուններին, թղթախաղի, քէֆերի վրա,—մեծ մասամբ մեր հարստացած parvenu բուրժուադրոյի օրդիները, իսկ մեր հին տոհմերի ներկայացուցիչները երբեք չեն էլ ունեցել այն նիւթական միջոցները, որ օրդիներում մասնակցին, ինչպէս մասնակցել է մեր պոլուտուկրատիան:

Երվանդագէի ներկայացրած իշխան Միքայիլը մի հիւանդոտ, պաթօրօգիական անձնաւորութիւն է, նա անպաշտաւ ունի դէպի օրգիանները, պակասութիւն է մի չը սիրած, բայց հարուստ աղջկայ հետ, որպէս զի նրա փողով դարձեալ չարութեան է այդ օրգիանները, մի և նոյն ժամանակ մերթ կեղծաւոր կերպով փայփայում է նրան, որպէս զի աւելի փող կորդի նրանից, մերթ ամենամանկայի գեաղապա կան կերպով սպառնալիքներ է աւանդում նրան, չպարտելով նրա երեսին այնպիսի ահաղիկներ, ինչպէս «Սնաւորակ մարդու գաւակ» խօսքերը: Վերջը, երբ նրանից, ինչպէս կաթնատու կովից, ամբողջ կաթը կը լինի է, նրա գրպանը կատարելապէս դատարկ է, սխալ է բարոյապէս ճշշել նրան, որ իր եղբորից էլ փող վերցնէ, իսկ երբ այդ էլ չէ աջողում, հասցնում է նրան վերջին հարուածը, խլում է նրանից իր միակ

իմ հարեան գիւղական տարրը հակումներ ունի դէպի աւաղակութիւնը,—և ահա իմ գիւղի վիճակն էլ դառնում է անապահով:

Ուրեմն հոգալով հարեաններս մասին, ջանալով նրանց վրա քաղաքակրթական ներգործելու, մենք իսկապէս դրանով հոգում ենք և մեր մասին, դրանով բարւոյն ենք և մեր դրութիւնը, դրանով ապահովացնում ենք և մեր սեփական վիճակը:

Իսկ հարցը դրանում է, թէ ի՞նչ ձևով, ի՞նչ միջոցով պէտք է ազդենք մեր հարեան թուրք անշարժ տարրի վրա, որը անընդունակ է հանդիսանում դարերի ընթացքում նոր մտքերով տպաւորվելու, անընդունակ է հանդիսանում իր հնապաշտ, նեղ աւանդական դրութիւնից դուրս դալու:

Մի ուրիշ հանգամանք էլ կայ, որը գուցէ մեզ, հայերիս, արգելք է դնում մեր հարեան թուրք տարրի վրա գործնական նապէս ներգործելու, փոքր ի շատէ քաղաքակրթական նրա վրա ներգործելու:

Մի անշարժ, դէպի լուսաւորութիւնը անզգայ դարձած, ինչ էրոյ, թմրած տարրի վրա փոքր ի շատէ աշուղութեամբ ներգործելու համար, հարկաւոր է որ այն տարրը, որի վրա մենք մեզ նպատակ ենք դրել ներգործելու, նախ և առաջ յարգէր մեզ, մեզ հեղինակութիւն ճանաչէր, մեզ որ և նշանակութիւն տար:

Թուրքը, մահմեդական տարրը, չափից դուրս խաւար է դեռ եւս, որպէս զի նրա աչքում ուսումը, դպրոցը, արհեստը, գեղարուեստը, գրականութիւնը, մամուլը, եւրոպական քաղաքակրթութիւնը՝ որ և է հեղինակութիւն ունենալու թուրքը, ինչպէս ամեն անգլադարձացած տարր, յարգում է ամեն մարդուն իր ձևով, իր չափով է չափում և ուրիշներին: Թուրքից մեզ յարգել տալու համար պէտք է, եթէ այդպէս կարելի է ասել, նախ իր գործածած, իր յարգած գէշերով իրան հետ կուսել, և ապա, երբ նա արդէն կը սկսի մեզ յարգել, կը սկսի մեր հեղինակութիւնն ընդունել, այն ժամանակ միայն կարող ենք վստահանալ

զաւակը և մահման է հասցնում կնոջը... Մենք կրկնում ենք, այդ տեսակ մարդ կարող է գոյութիւն ունենալ և մեր արխուսկրատի մէջ էլ, բայց նա այդ մեր դասակարգի մեծ ծամաւն ու թեւան տիպ չէ: Մեր ազնւականն հին իշխանական տոհմերի և նրանց հետ ազգակցական կապ ունեցող պատաւոր քաղաքացիների հին տոհմերի յատկանիշները բոլորովին այլ են. մեր արխուսկրատը ուղեղով փոքր ինչ թոյլ է, վերին աստիճանի բարի է, դարձի մահու է, անհոգ է, ծոյլ է, եռանդից զուրկ է, փառաս է, չը գիտէ իր սեփական աշխատանքով ապրել ու փող վստակել (այդ պատճառով նա չէ սիրում զաւակացի եկեր ճարպիկ, հարստանալու ընդունակ հային), նրա միակ ապաստանը խաղաղ պետական ծառայութիւնն է, նա երիտասարդութեան ժամանակ փողը ինչ քէֆ է անում, բաւական մաշում է իր ֆիզիկական ոյժերը, ապա հասունացած հասարակում աշխատում է ամուսնանալ մի որ և է հարստացած չարիքի, վախառուի, կամ կապալաւոր աղջկայ հետ, իր կեանքի մնացած կէտը իր կնոջ ու զաւակների հետ, իր չարիքի, կապալաւոր կամ վախառու աներոջ հովանաւորութեան տակ անգործ ու ապահով կերպով անցկացնելու համար: Տիպ ստեղծելու համար պէտք է դիտել իմանալ, գուցէ մի ժամանակ, արանից շատ և շատ տարբեր առաջ, եղել են քէֆեր անող հայ արխուսկրատներ,—իսկ հիմա (պէտք է դիտել իմանալ կրկնում ենք) մեր հին տոհմերի մնացորդ ներկայացուցիչների ժամանակակից, վերջին ֆօրմացիան բոլորովին այլ եւսաւորութիւն ունի:

Նրա մէջ փոքր առ փոքր մոցնել ջանալու և քաղաքակրթութեան բարիքները:

Իսկ զապայտի փաստ է որ թուրք տարրը անընդունակ ոչ թէ միայն չէ յարգում հային, բայց նոյն իսկ իր նեղ տեսակետից, իր նեղհայեաց համոզմունքով արհամարհում է հային:

Ի՞նչ է թուրքի սրտում արմատացած նրա դէպի հայերն ունեցած արհամարհանքի պատճառը և ի՞նչպէս պէտք է անենք դէպի մեզ ունեցած այդ դարեւոր արհամարհանքը վերացնելու համար,—այդ խնդիրը կաշխատենք մեր յաջորդ յօդուածի նիւթ դարձնելու:

Գ. Ա.

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՏԱՊԱՏԻՑ

#### Գեղտնմանքի 8-ին

Անկեղծ հայր անկարող է չուրախանալ տեսնելով այն առաջադիմութեան ոգին, որ վերջապէս սկսեց մօտ գործել մեր երկու նշանաւոր սրբալայերի—ա. աթոռի և Գեորգեան ճեմարանի մէջ: Մեք ճեմարան, և նախկին դեղնած երես աշակերտների և թիւրած երես ուսուցիչների փոխարէն կը տեսնենք այժմ զուարթ երես ուսանողներ և խաղաղադէմ ուսուցիչներ (քիչ բացառութեամբ): Այժմ պարզ նկատվում է աշակերտների երեսներին, որ իրանք մի պարտք միայն ունեն կատարելու, այն է,—սովորել, իսկ ուսուցիչները կատարում են իրանց պարտականութիւնը, այն է—սովորեցնել: Ինձ այնպէս է թվում, որ եթէ ճեմարանի վարչութիւնը այժման նման չարունակ իր ուշիմ և մարդասէր ընթացքը՝ երբեք այլ եւս գծաւորութիւնների առիթ չը պէտք է ներկայանալ և այն ժամանակ ճեմարանը կը տայ այն պտուղը, որով կը հանգստանան երջանկալիքատակ հիմնադրի ոսկրները իր ցուրտ գերեզմանի մէջ և կարողանան ազդի յոյժը:

Երանի թէ անվերադառնալի գնային այն օրերը, երբ ուսուցիչը զինվում էր իր ընկեր ուսուցչի և թշուառ աշակերտների դէմ, իսկ աշակերտը

մեր արխուսկրատները դարձել են այժմ հաւող, խնայող, նոյն իսկ հրեշտակութեամբ հասցրած ժլատ են դարձել: Նրանք ամուսնանում են հարստացած կապալաւոր կամ վախառուի աղջկայ հետ, որպէս զի դրսւտ են իրանց կարողութիւնը և ոչ թէ վատնեն փողերը: Ինչ պակասութիւն էլ ունենան մեր հին տոհմերի մնացորդ ներկայացուցիչները, բայց նրանք գոնէ կիրթ ձևեր ունեն ընդհանրապէս, և բացառութիւն կաղճող իշխան Միքայիլը պէս գեաղաւոր էր չեն... Միայն գեաղաւոր կարող է այդ աստիճան անվայել վայելել, ինկվիզիցիական տանջանքներին են թարկել իր հրեշտակ կնոջ, որին պարտական է նոյն իսկ իր ապրուստով: Բացի սրանից հային, առհասարակ յատուկ չէ Երվանդագէի իշխանի հայեացքները հայ ընտանեկան կեանքի վրա. իր հայր կասէ այդ տեսակ խորհրդը. «Հատում եմ այդ հայուհիներին. միշտ բարոյական, միշտ աւաքներ... զգլում եմ այդ տեսակ ընտանեկան կեանքից»: Այդ տեսակ միտք ոչ հայ իշխանը, ոչ էլ հայ վաճառականը չեն յայտնի: Եթէ հայը մինչև անգամ տնից դուրս քէֆեր է անում, նա դարձեալ պահանջում է, որ իր կնոջ իրան հաւատարիմ և աւաքներ լինի. նա երբեք չի համաձայնի, որ իր կնոջ նոյն ազատութիւնը վայելէ, ինչ որ ինքն է վայելում: Հայի մէջ դեռ մնացած է խիստ հարեմական հայեացքը կնոջ վրա ու փակ ընտանեկան կեանքի վրա...

Գարձեալ մի քանի խօսք Միքայիլի տիպի առիթով: Վերջին ժամանակները ֆրանսիական

դիմում էր իր ընկեր աշակերտի և իր դաստիարակի դէմ և այդ բոլորը ի վնաս առաջադիմութեան: Յուսով ենք այդ մասին, որովհետեւ տեսնում ենք թէ ինչպէս ներկայ վարչութեան արած ֆանքերի շնորհով միանգամայն հեռացել է այդ պատկանելի հիմնարկութեան միջից մի տարի առաջ թաղաւորող եղբայրական ոգին իր բաժանիր որպէս զի տիրես: սկզբունքով միասին: Այդ առթիւ հրապարակաւ մեր շնորհակալութիւնն ենք յայտնում Հ. տեսուչ եպիսկոպոսին և իր օգնական պ. Սաղաթիւնեանին: Նորայայտ շնորհակալութեան արժանի են ներկայ արժանաւոր վերակացունքը, որոնց ջանքերի շնորհով համարեա վերացել է աշակերտների միջից սովորութիւնները, որոնք յատուկ են գիշերօթիկ ուսումնարաններին:

Նախկին վարչութեան օրով, այսինքն դեռ մի քանի ամիս առաջ, առողջապահական ամենակարեւոր պահանջները նոյն իսկ զանցառութեան էին արված և այնպիսի սկզբունք էր թաղաւորում, որ ստամոքսի խանգարվածքով (կատար) տանջվող հիւանդ աշակերտին կերակրում էին թթված քալամով, ուսպով և լոբիով՝ խտտակցութեան և նեղ կրօնամոլութեան ընտելացնելու գիտամբ: Այդ բոլոր անպատեհ հանգամանքները հեռացնելուց ի բաց՝ դուրս էր հանում մարմնամարզութիւնը և երաժշտութիւնն էլ իրանց արժանի տեղը գրաւեւ, որպէս նկատում ենք այդ մասին ներկայ վարչութեան արած ջանքերից:

Անկարելի է նոյնպէս չուրախանալ Հ. Տեղապալ Նիւմիա սրբազանի միւս առաջադէմ ձեռնարկութիւնները տեսնելով, որոնց շնորհով վերջապէս շունչ պէտք է առնի մեր հնադարեան ս. աթոռը:—Յայտնի բան է, որ ս. աթոռը ունի նշանաւոր կարգաւորներ և հողեր, որոնք մինչև այժմ թողնւած էին անխնայ և առանց խղճի դէմ մեղանշելու պէտք է ասենք, որ այդ կալուածները ծառայում էին զլիաւորապէս մասնաւոր անձանց զբաղմունքը պարարտացնելուն:

Ինչն է մեզ ամենից դժգոյս, եթէ ոչ ներկայ կանի սարսափելի սղութիւնը: Հ. Տեղապալը զգալով այդ խնդրի մեծ նշանակութիւնը՝ հրաւիրել է երկու մասնագէտ գիւղատնտեսներ, որ նրանք քննեն մանրամասն վանքի կալուածները և գիւղատնտեսական ներկայ դրութիւնը և որոշեն անելի փոփոխութիւնները: Պէտք է խոստովանել, որ գիւղատնտես Արշակ Զարակեանը և պ. Ա. Թաթեղեանը մեծ եռանդով քննեցին մանրամասն, ուսումնասիրեցին և զգաւոր գելուցումն ներկայացրին Հ. Տեղապալին: Յուսով ենք, որ այդ հարցը կրկին քննուի ի դատապարտելի, որովհետեւ դրանից մեծ եկամուտ կարող է ստանալ ս. աթոռը:

Ընթերցող, այդ հարցերի զարթեցնելն էլ մի նոր դարադուլն է մեր վանքի կառավարութեան

համար, որովհետեւ երջանկալիչափակ Ներսէս հինգերորդ կաթողիկոսից յետոյ այդպիսի հարցեր երբեք չեն չօշափվել մեր վանական կառավարութեան մէջ:

Թէ մինչև այժմ ինչպէս է կառավարվել վանքի այդ գիւղատնտեսական ճիւղը, ընթերցողը կարող է տեսնել հետևելով:—Վանքն ունի 700 գլուխ անասուններ, որոնցից 500 միայն ոչխարներ են, այդ 700 գլուխ անասունների վրա դրադված են 66 մարդիկ: Իսկ ես տեսել եմ մի քանի տասնեակ անասնապահներ, որոնցից իւրաքանչիւրն ունեցել է 1000 ոչխար և այդքան ոչխարները կառավարել են ամենաաշուոյնով 6—7, առ առաւելն 8 մարդիկ....

Դարձեալ ստիպված ենք կրկնել, որ մեր աղքատիկ ուսումնարաններում աւարտողների մեծ մասը գիւղացիների զաւակներ են, որոնք ընտրում են իրանց համար ուսուցչութեան արհեստը գիւղերում և վերջի վերջոյ քահանայ են ձեռնադրվում դարձեալ գիւղացիների համար: Այդ ասպարիզում գործողներից է կախված ժողովրդի զարգացումը, առաջադիմութիւնը և բարօրութիւնը. և եթէ այդ ասպարիզում գործողները ծանօթ լինեն բժշկութեան, աւելի լաւ է ասել առողջապահական տարրական գիտելիքներին և երկրագործութեան կատարելագործված ձևերին՝ որքան աւելի նպաստած կը լինեն գիւղացիների առաջադիմութեանը և բարօրութեանը:

Ինչ խօսք, որ մեր միակ ձեռնարանը և վանքը իր գիւղատնտեսական բաժնով առաջին ձեռնահաս հիմնարկութիւններն են, որոնք գիւղութեանը կարող են մատակարարել այդ գիտելիքները մեր գիւղական ուսուցիչներին և քահանայներին:

Որքան յիշում ենք, հանգուցեալ հիմնադրի օրով առողջապահական դասեր լինում էին ձեռնարանում, որոնք յետագաների օրով աւելորդ համարվեցան. (մի՞թէ Քրիստոս ընչ հետեղներ ունեցաւ իր բժշկութեան շնորհով): Ուրեմն դժուար չի լինի ձեռնարանում նորոգել առողջապահական դասերը, իսկ վանական կալուածների համար հրաւիրել մի հմուտ գիւղատնտես և կազմել մի կանոնաւոր ֆէրմա, որտեղ կարելի կը լինի գործնականապէս ծանօթանալ և սովորել գիւղատնտեսութիւնը:

Այդպիսի մի նշանաւոր գործ է համար պէտք է հրաւիրել մի հմուտ մարդ և լաւ վարձատրել և ոչ թէ ամեն մի ինքնակալ գիւղատնտեսի՝ ներս թողնել, և վնաս առաջ բերել օգտի փոխարէն....

Յ. Խ.

ՆԱԽԱԿ ԵՈՒԴՈՒՑ

Դեկտեմբերի 12-ին

Ամսիս 11-ին, Ն. Խանդավիրեանցի թատրոնում, յօգուտ կովկասի հայոց բարեգործական

անդրոտ, բայց առողջ դէմքը նկարելու, կը նկարէր դիտող մի բանասիր դէմքը, որի երեսը ծածկված է խոցերով և որի քիթն ընկած է... Դա կը լինէր ոչ թէ գեղարուեստ, այլ պաթօլօգիական նկար...

Ահա մի քանի նմուշներ Ֆրանսիական ժամանակակից պաթօլօգիական վէպիկների անճոռնի սիւսէտներից: Մի գաւառական քաղաքի քաղաքագլուխ, ամենից յարգված և սիրված մի մարդ, որը այսօր թէ վաղը դառնալու է և աղքատիկ ժողովի պատգամաւոր, գուցէ և մինիստր, ուսով անցնելով ամառ ժամանակ քաղաքին մօտակայ մի ստուերախիտ մերիով, տեսնում է, որ մի 12 տարեկան գեղեցիկ աղջիկ, գետակի մէջ լողալուց յետոյ, նստած է ափի վրա: Յանկարծ այդ պատուաւոր մարդու վրա մի տեսակ գոգոթիւն է գալիս. նա բռնաբարում է աղջկան, յետոյ վանխնալով, որ աղջիկը կը պատմէ իր արածը, անմիջապէս լսելովում է նրան: Ապա երբ դատաստանական ընտելութիւնը իրան սկսում է կիսակաշկել, նա անձնապահութիւն է դարձնում: Կամ մի այլ անճոռնի օրինակ. մի արհեստաւոր կենակցում է իր հարազատ աղջկայ հետ, մի և նոյն ժամանակ ձեռնում, բռնաբարում է նրան, և երբ նրանից երեխաներ է ունենում, ամեն անգամ հրաժայում է այդ ողորմելի մօրը խեղդել իր զաւակներին:

Կամ նոյն գլուխի պաթօլօգիական, հիւանդոտ, հրէշական, ոճաւոր, անբնական տիպեր չեն արդեօք կոմս Տօլստօի «ВЛАСТЬ ТЬМЫ» պիեսայի տիպերը:

Սակայն եւրոպայում թող ինչ ուղեն գրեն,

ընկերութեան չուշու ճիւղի, սիրողների ներկայացում կայացաւ: Խաղաղին «Արշակ» Բ. Գալֆայանի և «Բռնի ամուսնութիւն» վոդևիլը: «Արշակ Բ.»-ը խաղաղական կերպով անցաւ: Հասարակութիւնը շարունակ ծիծաղում էր նոյն իսկ ամենադրամատիական համարվող տեղերում, թէ և մեր հասարակութիւնը այնպիսի հասարակութիւն է, որ Հիւսպիլի, Նիլերի դրամաները ներկայացնելու ժամանակ էլ կը ծիծաղի: Սիրողներից, ի հարկէ, չէ կարելի առհասարակ խիստ պահանջող լինել, բայց սիրողներից կարելի է պահանջել, որ նրանք ներկայացնեն այնպիսի պիեսա, որ թէ իրանք կարողանան փոքր ինչ կարգին խաղալ և թէ հասարակութեան մտքին մի բան տալ: Կարծես մեր բնկերտաւորում ուրիշ պիեսաներ չը կան, բայց Սոնդուկեանցի և մեր պատմական խաղաղական պիեսաներից, որոնք այնքան ներկայացվել են այստեղ, որ հասարակութեանը բոլորովին զղվեցրել են: «Բռնի ամուսնութեան» մէջ կնոջ դերը հանկուծ էր, կին-խաղացող չը ծարվելու պատճառով: Ամօթ չէ իրանց ինքնաճանաչ համարող մեր կանանց կամ օրիորդները համար, որ իրանցից ոչ ոք չէ կամենում բնւ դուրս գալ և ներկայիս քաշել անդիւր երկու խօսք ասելու:

Մեր քաղաքում ալիւրը և ալ այս տեսակ մթնոլորտում վաճառվում են քաղաքային կշիռքի մօտ: Կանոնի համաձայն մանրավաճառները, հաց ծախողները մինչև կէս օր իրաւունք չունեն մթերք գնել, որովհետեւ դրանք կարող են բոլոր մթերքները գնել և յետոյ հարստահարել ժողովուրդը: Բայց այդ կանոնը ամենուր չէ կատարվում. մանրավաճառները վաղ առաւօտվանից սկսում են մթերքներ գնել, այնպէս որ ժողովուրդը չէ կարողանում ուղղակի գիւղացիներից գնել մթերքները, ուստի ստիպված եռապատիկ, քառապատիկ գնով գնում է բախկալից: Ամենից շատ հարստահարվում է ոչ-ուսուր դասակարգը: Բազարի վերահսկողը չը գիտենք ինչ բանի է, որ ամենին ուշադրութիւն չէ դարձնում դրա վրա: Ասենք, մեր քաղաքի բարեկարգութեան վրա մէկը չը կայ, որ ուշադրութիւն դարձնի՝ թէ բազարի վերահսկող, թէ դեպուտատ և թէ մնացածները....

Քաղաքին աղգաբնակութիւնը պատրաստվում է խնդիրը տալու, ուր հարկաւոր է, այստեղ ինքնավարութիւն մտցնելու համար:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՍԻՆ

Այս օրերս հրատարակվեց մեր երիտասարդ նկարիչ, Պոլոս Տէր-Ասատուրեանի գեղարուեստական ալբոմը, որն իր մէջ պարունակում է հայ-գործիչների 33 մեծադիր պատկերներ: Այս

մեզ ինչ փոքր... Գրականութիւնն այնտեղ այնքան հարուստ է, նրա մէջ կայ և լաւ և վատը, որ ցանկացողը և հասկացողը կը ընկէ լաւ վտից: Այնտեղ կայ կրիտիկա, հասարակաց կարծիք: Բայց մի փշայնեք մեր նոր և աղքատ գրականութիւնը, մի փշայնեք հասարակական կարծիքը: Պարզ մեր հասարակութիւնը, մտքնելով գեղարուեստի մէջ այնպիսի անբնական, կամ բացարձակապէս հրէշաւոր տիպեր, ինչպէս իշխան Բէգ-մուրեանի տիպը, որն ուրիշ բան չէ եթէ ոչ մի անճոռնի, կամ աւելի լաւ է ասել մի հոգեպէս հիւանդ մարդ, որը համ գոգված է թղթախաղի վրա, համ չնչապառ աղահոլութեամբ օրիւնների ետեղի է ընկած, չէ կարող յազգնել իր անպաղ ծարաւը դէպի սեռական յարաբերութիւնները, որը ենթարկված է խելագարութեան այն տեսակին, որին պիսիւրատր-թիւնները անուանում են mania erotica.

Այժմ աչքի անցնենք Շիրվանդադէի պիեսայի միւս մի քանի տիպերը: Իսկապէս հեղինակը իր ամբողջ պիեսայում ստեղծել է միմիայն երկու տիպեր, այն էլ պիեսայի հետ ոչինչ կապ չունեցող տիպեր. միւր Չարաբանի կոմիական բաւական աշուղ տիպը, բուլվարի այդ խաբարբաշանը, կրեւնների հերոսը, տնից տուն ման եկող բամբակաւոր ու իր բամբակաւորների համար մի քանի բուլբուլ իր թէ պարտքով վերցնողը: Միւս տիպը չեղիքն է և Գարեգինի մօր, Հոռոմի տիպն է: Սակայն այդ բարի, նախապաշարված, ուղեղով սահմանափակ, անկիրթ, միամիտ, հնապաշտ պառաւ իրան Շիրվանդադէի ստեղծած էլ չէ, այլ մի թոյլ

բամբակաւոր չեղիք է և չէ կարելի համակրութեամբ չը վերաբերվել դէպի երիտասարդ նկարիչ գործը: Պ. Տէր-Ասատուրեան բարեխղճօրէն է կատարել իր ձեռնարկած գործը, միայն պէտք է խոստովանենք, որ մի քանի պատկերներ փոքր ինչ անաշուղ են դուրս եկել: Սակայն պատկերների մեծամասնութիւնը շատ գեղարուեստական աշխատութիւն է ներկայացնում: Գեղեցիկ և խորհրդաւոր են նմանապէս կենդանագիւղները շուրջը նկարած վիսիէտները, որոնց իմաստը յարմարեցրած է իւրաքանչիւր գործիչի գործունէութեան տեսակին: Միայն մեր կարծիքով, ալբոմը պէտք է կրկն ոչ թէ հայ դ օր ծ ի չ ն եր, այլ դիցուք հայ ն չ ա ն աւ ո ռ անձինք վերնագիրը, ինչպէս և թարգմանված է նոյն ալբոմի ձախատին Ֆրանսերէն լեզուով, քանի որ ալբոմի մէջ ամփոփված պատկերներից շատերը այնպիսի անձինք են ներկայացնում, որոնք թէ և նշանաւոր են, որպէս հայեր, բայց հայ գործիչներ երբեք եղած չեն. օրինակ, զօրապետներ, պետական ծառայողներ, նկարիչներ և այլն: Ալբոմը բաժանորդագրութեամբ արժէր, ինչպէս յայտնի է, 3 բուլբուլ, իսկ այժմ արժէ 5 բուլբուլ: Ինչ և ից գեղեցիկ աշխատանք է և կատարեալ նորութիւն է մեր աղքատ գեղարուեստական աշխարհում:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի թմբի առաջնորդը սինօդից հրաման է ստացել կաթողիկոսական ընտրութեան համար պատգամաւորների ընտրութիւնը նշանակել յունկար ամսին թեմիս գաւառական քաղաքներում, իսկ Թիֆլիսի եկեղեցիներում ընտրութիւնները կը նշանակվեն մեծապատին, ուրեմն փետրվար ամսին:

Թիֆլիսում յայտնի ախայցիսացի ոսկերիչ պ. Կարապետ Սերոբեանց, որը զանազան ցուցանալիքներով պարգևատրված է պատանշաններով և բազմաթիւ գովասանական թղթերով, նոյնպէս և պարսից Շահից ստացած լինելով արեգակի և առիւծի պատանշանը, այս օրերս Ֆրանսիական աղգային գեղարուեստական ակադէմիայի անդամ ընտրվեց՝ իր հիացմունքի արժանի և կատարելագործված արհեստի համար:

Այս օրերս Թիֆլիսի նահանգական դատարանում դատվում էր «КАВКАЗ» լրագրի խմբագիր պ. Տեբէնիով, որը հրաժարվել էր յիշեալ լրագրում ձրի տպագրել Թիֆլիսի ուսուցչ դրամատիական խմբի կառավարիչ պ. Ֆորկատտիի պատասխանը նոյն լրագրում տպված իր խմբի կողմից իր դէմ մի բողոքի առիթով: Պ. Տեբէնիով Ֆորկատտիի պատասխանը ձրի չէր կամենում տպել մինչև անգամ չը հպատակվելով կովկասեան ցենզուրային կոմիտէի ստիպողական առաջարկութեանը: Դատարանը գործը ընկնուց յետոյ՝ պ. Տեբենիովին

կրկնութիւն է, նմանողութիւն է Սոնդուկեանցի պիեսաների մէջ դուրս բերած Թիֆլիսի պառաւ կանանց տիպերի:

Այժմ տեսնենք թէ Հեղինէն և Գարեգինը (ըստ և եղբայր), անառակ վաշխառուի այդ առաքելի դաւաճները, արդեօք տիպեր են թէ նմանապէս բացառութիւններ, միայն բացառութիւններ լաւի մէջ, ինչպէս բացառութիւն է իշխանը վատի մէջ:

Այդտեղ փոքր ինչ պէտք է հեռանալք բուն խնդրից: Կենքից վերցրած դրամա կամ վէպ գրելու համար պէտք է գիտել իմանալ, սակայն դա բաւական չէ. պէտք է և բազմակողմանի մտաւոր զարգացում էլ ունենալ: Եթէ պ. Շիրվանդադէ ուղում է մեզ ներկայացնել Հեղինէին, և Գարեգինին, որպէս պայծառ բացառութիւններ,—մենք դրա դէմ ոչինչ չունենք: Այն ժամանակ նրանք տիպեր չեն: Իսկ եթէ իր կարծիքով նրանք տիպեր են,—նա չարաչար սխալվում է, որովհետեւ նրանց որպէս տիպեր ներկայացնելով, նա մի զանաւոր է բնագիտական, ֆիզիօլոգիական ապացուցված օրէնքի դէմ, ժառանգականութեան օրէնքի դէմ:

Գիտութիւնը մեզ ապացուցանում է ոչ թէ միայն անհատների, ընտանիքների, սերունդների, բայց և ամբողջ ազգերի ու ցեղերի վերաբերմամբ, որ մեր նախնապապերի, պապերի, ծնողների լաւ և վատ յատկութիւնները անցնում են մեզ ժառանգաբար, ինչպէս մենք ժառանգում ենք տիպը, կազմուածքը, մարմնական հիւանդութիւնները, այնպէս էլ ժառանգում ենք արժանաւորութիւնները, արասները, բարոյական ախտերը, առանձնապատ-

դատաւարանի 65 րոպէի տուգանքի, դատաւարանական ամբողջ ծախսը նրա վրա դնելով:

ԱՍՏԲԱԽԱՆԻՑ պ. Յովհաննէս կիսապատկեր, ինչպէս ամեն տարի, այնպէս էլ ներկայ թվին, ինքն գրվելով «Մշակի» մի օրինակին, ուղարկել է մեզ բացի սրանից 50 րոպէի, որպէս զի 1892 թվին ընթացում ուղարկեց «Մշակի» 5 օրինակը մեր հայեցողութեան համեմատ: Մենք կուղարկենք «Մշակի» այդ 5 օրինակները պ. կիսապատկեր անունից հետեւել հասցէներով. 1) Ալեքսանդր Կոլոնի «Արդարութեան» իգական դպրոցին, 2) Գորոն հայ զինուորներին, 3) Աւան վանքի միաբաններին, 4) Պարբիլի հայ ուսանողութեանը, և 5) Լէպլիգի հայ ուսանողութեանը:

Պ. Յովհաննէս Թումանյանը նուիրել է 1892 թվին «Մշակի» մի օրինակ Ներքին-Ազգային հայոց երկուսու դպրոցին:

Գեկտեմբերի 14-ին, շաբաթ օր, սուրբ Զատիկի տօնին էլ և ԹԻՖԼԻՍԻ վանքի մայր-եկեղեցին լի էր աղօթողներով: Թեմական առաջնորդը, տեղապահը և պատգամավորը, ներկայ էին պատարագին, քարոզ էլ չէր կար, իսկ աշակերտները երգեցին խմբի երգեցողութիւնը շատ անկանոն էր:

Ճողովդական լուսաւորութեան միջնորդութեան մէջ հարց է յարուցված՝ միատեսակ դարձնելու այն դասագրքերը, որոնք գործ են ածվում այս կամ այն ուսումնարանական շրջանի կառավարչական դպրոցներում:

Մասկայի լրագիրները տուած սեղեկութիւններին նայելով, գեկտեմբերի 21-ին պիտի կայանայ Մասկայում սովորական «հայկական երեկոյթը», յօգուտ Գասպարեան ապաստարանի:

Մարտի 15-ին մարտական դպրոցներում մտցնելու մեղու ապահովման դաստառութիւնը:

Հրաւիրում ենք մեր գաւառական ինտելիգենտ կանանց ուղարկելու Սալմաստի «Հայունեաց Բարեգործական ընկերութեան» վրա: Նման փոքր կողմի կանայք ներկայանալ օժանդակութեւն ցոյց տան այդ ընկերութեան, նա կարող է բաւական նպաստել Սալմաստի խաւար հայ ժողովրդի մտաւոր զարգացման գործին:

Այսօր, հինգշաբթի, 19-ին գեկտեմբերի, ԹԻՖԼԻՍԻ հայոց գերաստանական խումբը արժանական թատերում ներկայացնելու է Պետելսինի «Օրվան չարք» (Злоба дня) պիէսան: Կը մասնակցեն խմբի անհնաւա ոյժերը: Սկիզբը 8 ժամին երկոյթեան:

Կուրծիւնները: Բացի ժառանգական անվիճելի օրէնքից կայ և օրինակի ոյժը, շրջանի ներգործութիւնը, սկզբնական դաստիարակութիւնը: Անպիտան, գոյ, հարստահարող, վաշխառու, աւաղակ մարդու երկու դասակներին Շիրվանդադէ մեզ ներկայացնում է որպէս երկու հրեշտակներ, որպէս անարատ, առաքինի մարդիկ... Բացառութիւններ կարող են լինել, բայց ընդհանրապէս դա ընական է, դա հակասում է ժառանգականութեան ֆիզիոլոգիական օրէնքին:

Նման փոքր տարրեր են ու թիւնը կարող է ժառանգական յատկութիւն լինել ամբողջ մի ցեղի մէջ, ինչպէս էլ այլ ցեղի մէջ անմիաբանութիւնը կարող է ժառանգական յատկութիւն լինել: Նոյնպէս ժառանգական են և ուրիշ վատ կամ ստոր ինստիտուտներ, ինչպէս ժառանգական են և լաւ յատկութիւններ, վերջապէս ժառանգական են ամեն տեսակ ֆիզիոլոգիական առանձնայատկութիւնները:

Մասկայում ծնված հայ երեխան, որը մի քանի քիչ տարի է հայրենիքում, զիջումը 12 տարեկան հասակում գալիս է իր ծնողներին հետ Նրան: Մի և նոր ժամանակ գալիս է Նրան, այդտեղ իր ընտանիքին հաստատելու համար, մի մօսկվաբնակ ուսն ընտանիք, նմանապէս իր 12 տարեկան դասակով: Նրան երեխաներն էլ հաւասար ընդունակութիւններին տէր երեխաներ են, երկուսն էլ միաժամանակ սկսում են հայերէն սովորել, երկուսն էլ հաւասար աշխատասիրութեամբ են պարապում այդ լեզուով: Բայց ահա հայ երեխան, որն իր ծնողներից ժառանգած ունի իրան անձնօրէն մայրենի լեզուն սովորելու

Մեզ հաղորդում են որ այս ամսի 30-ին, երկուշաբթի օր, ԹԻՖԼԻՍԻ Բանկային թատերում լինելու է մեր տաղանդաւոր դերասան պ. Արեւելեանի և նմանապէս դերասանուհի տիկին Զաքարի բենեֆիտը: Այդ օրը խաղալու են Իբսէնի «Ուրուականներ» պիէսան: Յոյս ունենք որ հասարակութիւնը սիրով կը վերաբերվի դէպի այդ բենեֆիտը, և կը հետաքրքրվի տեսնել հռչակաւոր Իբսէնի պիէսան, որը մեզ մօտ երբէք չէ խաղացվել ոչ հայերէն, ոչ էլ ռուսերէն լեզուով:

ԶԱՆԳԵԶՈՒԻՑ մեզ դրում են, որ Գորիսի հայոց դպրոցում վարժապետները մինը հնուցեց է: Սպասում են, որ թեմական տեսուչը նրա տեղ նոր ուսուցիչ ուղարկի:

Գեկտեմբերի 17-ին, Թիֆլիսի Ազնականների բանկի թատերում հայ դերասանական խումբը ներկայացրեց «Մարական սէր» թարգմանական մեյքապը: Այս վերջին յօգուտ տաղանդաւոր կոմիկ Տէր-Գալսեօյի և դերասանուհի Մ. Լիւթեանի: Թատերում հաւաքված հազարավոր լսողները ջերմ ոգևորութեամբ ընդունեց պ. Տէր-Գալսեօյին, վարժապետի շնորհ ընտանիքը: Տէր-Գալսեօյի յօգուտը, որին և տրվեցան մի քանի ընծաներ: Գերասանական խումբը իր կողմից ներկայացրեց պ. Տէր-Գալսեօյին մի ընծայ, մի ուղերձ կարդալով՝ նրա բեմական գործունէութեան առիթով, որին և բենեֆիցիանտը պատասխանեց շնորհակալութեամբ: Մեր կողմից ցանկանում ենք տոկոսներով տաղանդաւոր կոմիկին, որն արդէն 22 տարի է ծառայում է հայ հասարակութեանը քանի դեպ աւելի կը գնահատի պարտքի բեմական գործունէութիւնը: Ի դէպ, անկարող ենք կրկին անգամ մասնակցել շանի այն անմիտ, դատարկ և միայն «Չղոտ կանանց» դուրեկան մեյքապի վրա, ինչպիսին է «Մարական սէր» պիէսը, որն այդ օրը խաղացին: Խօսելով թարգմանիչ պ. Սենեքերիմ Արծրունու լեզուով «պիտոյ է ասել, որ այդ պիէսան պիտոյ է իսպառ արտաբերել բենեֆից: Ուրիշ կոմիկական պիէսներն ալ մէջ, պ. Տէր-Գալսեօյի անկարող անհամեմատ աւելի մեծ գուարճութիւն կը պատճառէր հասարակութեան:

### ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՐԷՆ ԱՇԸԳԵԱՆ ՊԱՏԻՄԱՐԻԿ ԿՈՆՒՄԿԱՐ

Տպագրում ենք ամբողջութեամբ Կ. Պօլսի այժմեան պատրիարք Աշըգեանի յայտնի կոնդակը: Ահա:

Համար՝ ընծային, թէ ուղեղի և թէ կողորդի կազմակերպութեան ֆիզիոլոգիական արամագործութիւնը, շատ հեշտութեամբ է սովորում հայերէնը, իսկ իր ուսն դասընկերը շատ դժուարութեամբ է կարող ըմբռնել և արտասանել իրան համար օտար հայերէն լեզուն:

Մի լիւծաբանակ մարդ պայտում է ծառայում է հեռու հիւսիսում, արակովում է այնտեղ մի օտարուհու հետ մինչև անգամ, և ունենում է այնտեղ մի դաւակ, որը տափարակ երկրում ծնված լինելով, երբէք սարկ չէ տեսել: Զանկարծ, երբ երեխան զիջումը 10 կամ 12 տարեկան է լինում, հայրը իր դաւակի հետ վերադառնում է իր ծննդավայրը, իր լեռնային երկրը... Եւ ահա երեխան անմիջապէս կերպարանափոխվում է. նրա աչքերը ուղիւս են յայնպիսի փայլել անսովոր վառ կրակով, նա լեռները երբէք չէ տեսած, լեռներին անսովոր, պահանջ է դրում մազցնել այդ լեռների վրա, և մազցնում է ճարպիկութեամբ, ինչպէս մի վայրենի աշծ... Անասնակալ, ֆիզիոլոգիական ժառանգական յատկութիւնը Յայնպիսի երեխան է եկել այդ երեխայի մէջ, յաղթող է հանդիսացել նրա ժամանակաւորապէս թմբած զգայարանների վրա:

Նման լաւ յատկութիւնները, լաւ ինստիտուտները ժառանգական են, ինչպէս կարող են վատ ինստիտուտները ժառանգական չլինել: Դրանց վրա էլ աւելացրէք և սկզբնական շրջանի ներգործութիւնը... Երեխան իր զոր, վաշխառու, աւաղակ հօր տան մէջ անպիտան օրինակներ է տեսել, քայքայ սրանց: Կարող չէր ժառանգել իր ծնողների արիւնի հետ միասին և նրանց վատ

«Մեր աղքն և եկեղեցին դարաւոր արկածից յեղաշրջութեանց ներքեւ անընդատ ժամանակաւ յանահարինս տառապելէ յետոյ՝ Նախախնամութիւն աստուածային իւր երկրպագելի ողորմութեան և գթութեան շնորհիւ հաճեցաւ պահպանել զայն և յանդերը հանել ընդ հօր պաշտպանութեամբ տիեզերակալ թագաւորութեան մեծի Տանն Օսմանայ: Մենք այն աշխարհակալ և տիեզերակալ՝ որ ի ձեռաց Նախախնամութեան աւանդ ընկալաւ այս վշտաշարար ժողովուրդ՝ զսախնամով պահելու և մշակելու համար համարձակութիւն պարգեց նմա և արտօնեց որ պաշտէ իւր կրօնը, վարուի իւր ծիսովը, գործածէ իւր լեզուն. ի մի բան՝ աղգային նկարագրի յատկութիւն անփոփոխ պահելու և զարգանալու բարի բարի միջոցները համարձակ գործարդէ: Եւ, որպէս զի իւր այս արտօնած շնորհներն արդիւնաւոր կերպիւ ի գործ դրուին՝ հրամայուելով ի ձեռն կազմաւորեալ հոգևոր իշխանութեան, աղգին պատրիարքութիւնը՝ որ աղգին հոգևոր և կրօնական կենսին անընդմիջական վերակացութիւնն է, իւր հովանաւորութեան ներքեւ աւառ և հաստատեց, ընդարձակաւ պետութեան այլ և այլ կողմերը տարածեալ և սփռեալ ժողովուրդն հայոց ժողովեց այս հոգևոր իշխանութեան գաւազանի ներքեւ, բաշխեց այս իշխանութեան վարչութեան մը պատշաճաւ բոլոր սեպականութիւնը. հրամայեց զսա միայն ձանաչել զլուսն և պատասխանատու ի վերայ համօրէն հոգևորականաց և աշխարհականաց հայ աղգին, և հաճեցաւ ի փոխարէն իւր հնաշխարհիկ և վեհանձն ողորմութեան՝ ի ձեռն այս հոգևոր իշխանութեան, ընդունել հնազանդութեան, հպատակութեան և հաւատարմի ծառայութեան շնորհապարտ ընծայարեութիւն ի կողմանէ աղգին:

Հայ աղգն անշուշտ ի վաղընչուց ժամանակաց անտր ընդ անկշռելի շնորհս Օսմանեան պետութեան երախտագրութեամբ զարմացեալ՝ հպատակութեան և հաւատարմութեան պարտոց հատուցման հետ գոհութեամբ և ուրախութեամբ սրտի կազօթէ միշտ առ Աստուծո՛ւ վասն յաջողութեան և խաղաղութեան աշխարհին և վասն անասան պահպանման Օսմանեան պետապաշտ գահունէ:

Պատմական և դրական այնքան ապացոյցներու առջև, սիրելիք, որք կը հաստատեն մէկ կողմանէ այս բարեխնամ թագաւորութեան բարամագալիկ շնորհներն և վեհանձնութիւններն, և միւս կողմանէ հայ աղգին հաւատարմութեան անեղծանելի յատկութիւնը, որչափ տրամաբան էր վերջինս ատեններս մերայնոց մի քանի անխնայաբար վերադառնալով մի քանիսի վարմունքը, որ զլուծվին հակապատկեր էին անշուշտ, աղգին ընդհանրական ոգւին և բնաւորութեան իսկականին:

Կը յիշէք անշուշտ, երբ անցեալ տարի նոյն

անվայել գործոց յանդիմանող արդարութեան ձեռքն ինկան, և ծանրապէս պիտի կրէին օրինաց խստութիւնը, և ահա նորին կայսերական վեհափառութիւն իւր առ հպատակ հայ աղգն ունեցած անյեղլի սիրոյն և անգին համակրանաց նոր ապացոյց մը ևս տալու համար զթաց յանցաւորներուն վրայ և ներեց նոցա պատիժն իւր մեծ հոգւոյն յատուկ վեհանձն և գերազանցապէս անխածելի անյիշաւարութեամբ, որով բազմաթիւ հարց, մարց, եղբարց, բարեկամաց և աղգականաց ողբ, լաց և արին-արտասուք զաղարեցան: Անգին էր կայսերական այս զթութիւն, անբաղդաւոր էր այս առթիւ հայ աղգին հանրութեան վերայ ունեցած սիրոյն աստիճանը. ուստի յայնժամ ծանուցանելով ամեն կողմ այս շնորհին մեծութիւնը, յատուկ հնազգորովը հրամայեցաւ եկեղեցեաց մէջ աղօթներ մատուցանել առ Աստուծո՛ւ՝ վասն բարեբաւտիկ կենդանութեան մեր ամենասիրելի վեհապետին, և անմոռաց յիշմամբ երախտագէտ մնալ առաջի մեծութեան կայսերական բարձր շնորհին»:

(Կը շարունակվի)

### ՆԱՍՏԱԿ ԻՍԱԿԻԱՑԻՑ

Նապօլի, 20 դեկտեմբերի  
Պատուական «Մշակ» լրագրի 134-դ համարում առիթ ունեցայ կարգաւոր յայտնի երգիչ պ. Ն. Դանիալեանի Մալապից գրած «Համակը: Եւ որովհետեւ իմ մասին էլ մի քանի գովասանական խօսքեր ասած էր, թող տուէք ինձ, խնդրեմ, հրապարակաւ յայտնել իմ շնորհակալութիւնը պ. Դանիալեանին, և այս առթիւ իմ կողմից էլ ուղղակի հաղորդել ձեզ մի քանի տեղեկութիւններ, որոնք գուցէ «Մշակի» ընթերցողների ումանց համար ունենան կարեւորութիւն:

Նապօլի քաղաքի պատմական և կամ աշխարհագրական դրութեան մասին ուրիշ անգամներ ինձանից աւելի հմուտներ գրած են ձեզ, իսկ ես կամենում եմ մի օր և է բան գրել, որը ուղղակի մեզ հայերին է վերաբերում: Նապօլի մէջ: Նրբ ևս հասայ Նապօլի, սրանից երեք ամիս առաջ, այնպէս էի կարծում, որ բացի պ. Դանիալեանից անգո ուրիշ հայ ոչ ոք չը պիտի լինէր, բայց և այնպէս հանդիպեցայ ես այստեղ մի ուրիշ հայ ընտանիքի ևս, որ քանի տարիներ ինչ ի վեր Կ. Պօլսից եկած ու հաստատված է այստեղ: Այդ ընտանիքի գլուխն է պ. Յ. Մաղաբանց:

Բայց երեկայեցեք զարմանքս, երբ ես հանդիպեցայ նաև արևելեան լեզուների արքունի ինստիտուտի պրօֆէսորներից մէկին, այն է տրապիզոնցի պ. Ստեփան Եղիշեանին, որը յայտնի հայկաբան լինելով հանդերձ քաջ գիտէ նաև արեւելեան և արևմտեան մի քանի լեզուներ ևս: Բաղդ

Շիրվանդադէի պիէսայում անառակ մարդու զաւակները բացառապէս առաքինի մարդիկ են: Նրա ամբողջ պիէսան աղպիսով միմիայն բացառութիւնների վրա է ստեղծված: Միջայլեւ բացառապէս անպիտան մարդ է, Հեղինէն ու Գարեգինը բացառապէս առաքինի մարդիկ են: Բայց պիէսաներ, որոնք հիմնված են ոչ թէ կենսելից վերցրած հաւաքական, ճիշդ տիպերի, և ընդհանուր երեկոյթների վրա, այլ միմիայն բացառութիւնների վրա, այդ տեսակ պիէսաները կօպէկի արժողութիւն չունեն ոչ գեղարուեստի, ոչ էլ գրականութեան համար:

Շիրվանդադէի պէս մարդկանց համար ճիշդ գիտութիւնը, ֆիզիոլոգիայի անհրաժեշտ օրէնքները, ոչինչ նշանակութիւն չունեն. նրանց համար ոչինչ նշանակութիւն չունի և մի աշխարհահռչակ Լամբրոզօ փայլուն հետազոտութիւններն ու փորձերը անառակութեան և յանցանքի ժառանգական յատկութիւնների մասին, նրանց համար նշանակութիւն չունի մեր ժամանակի ամենահանճարեղ գիտական վիպագրողներից միին, Էմիլ-Զօլայի հեղինակութիւնը, որը ստեղծագործել է իր հռչակաւոր «Բուգոն-Մակարներ» բովանդակը շարքը կարող «Բուգոն-Մակարներ» բովանդակը անառակապացուցանելու համար թէ յանցանքն ու անառակութիւնը սերունդից սերունդ ժառանգապէս է անցնում... Եւ այդ «Բուգոն-Մակարներ» վերջին շառաւիղը հանդիսանում է մեր առջև նրա այն «Նախն»-ը, որին ինքն հանճարեղ հեղինակը անուանել է աղբի կոյտի ոսկեղօծ ճանճը... (Կը շարունակվի)

